

Բ • ԽԱՆԱԹԵԱՆՑ

ԻՐԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

ա • ԱՌԱՋԱԲԱՆ

բ • Ն Ի Ի Թ


ՎԱՆԱՅ, ԿՈՂՊԱՅ ԵՎ ԱՊՐԱՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՎ



Պ Ա Ր Ի Ս

Տպագրութիւն «Բանասեր»ի

1901



ԻՐԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ա. ՀԱՅ ԵՒ ՊԱՐՍԻՑ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ամեն մի ազգ, զեւ իւր կեանքի օրօրոցում սիրում է զարգարել իւր հնազոյն անցեալն որպէս առասպելներով, քաջարի նախնեաց փայլուն հոգեւոր, նոյն իսկ սերել իրան որ եւ է զիւցազնից։ Այս թանկագին յիշատակարանն ժողովուրդը պահպանում է ամենայն սրբութեամբ եւ կտակում նորաւի սերնդին։ Հին Յոյներին հաճոյ էր խմբել ծեր «աշուղի» չուրջն եւ ականջ դնել Տրուադայի պաշարման, հերոսաց հուժկու հարւածներին, չաստուածոց խնջոյքներին, կամ Հերակլէսի, Թեսէոսի եւ այլ զիւցազանց արկածներին «նաղըներին»։ Ըստ խորեոսացու, Հայկի մասին «անդիր հին ասացեալ զրոյցներ» էին պատում ժողովրդի մէջ (1)։ Գերմանացոց «Նիբելունգներին մասին երգը» ամբողջապէս կենդանացնում է այս ազգի հնազոյն աշխարհայեցողութիւնը։ Ռուսաց «byliny» (եղեւիք) կոչւած վիպական աւանդութիւնները ներկայացնում են զարմանալի հարուստ պաշար ժողովրդի զիւցազնական անցեալին։ Թերեւս մի կողմ թողած արեւելեան առասպելների դանձարանն, որ ցիր-ցան տալով իւր իւր է զանազան երկրներ։

Ժամանակի ազդեցութիւնը մի կողմից, քաղաքակրթութեան՝ միւս հեղձեալէ թուլացնում են այս յիշողութիւնը ժողովրդի մէջ, իսկ ազգերի փոխադարձ յարաբերութիւններն առաջ են բերում եւ մտաւոր չփութմը, հետեւապէս եւ ընտանի աւանդութեանց ազաւազումն չնորհիւ օտարազնեայ զրոյցներին։ Սկզբնական սերմն աւելի խորն է թաղում նոր եւ նոր շերտերի տակ։

Պատմական անցքերն ոչ պակաս փոփոխութիւններ են մուծանում աւանդութեանց բովանդակութեան մէջ։ Հին հերոսը շատ անգամ անդի է տալիս նորադուին, նորան կտակում իւր ընտելութիւնը, յատկու-

(1) Գիրք։ Ա. Գլ. Ժ.։ Տես նմանապէս Վահագնի մասին Գիրք Ա. Գլ. ԼԱ.։

թիւները, զէնքերը՝ ժողովուրդը ինքն աշխատելով իւր հին գիւցազնից, որից բաժանւած է երկար դարերով, իւր բոլոր բանաստեղծական հանճարը թափում է նոր հերոսի շիրաջ, որ հռչակւում է նորա օրերով կամ մօտիկ անցելուամբ։ Նորա երեսակայութիւնը կրկին թեւ է առնում եւ կրկին ստեղծագործում։

Այսպէս են կազմւում սրբաւանական երգերն, որոնք խմբում են յայտնի ազգային գործիչներին շուրջն եւ պատում նոցա անունը առասպելական լուսով։ Ռուսաց ժողովուրդն այստեղ եւս կարող է ամենալաւ օրինակ ծառայել, թէ ինչպէս պատմական անցքերն ազգու արձագանք են գրանում ստոր խաւերի մէջ (1)։

Ամէն մի աւանդութիւն, որչափ էլ հինն լինի, իւր հեքեաթաձեւքով տակ թաղցնում է սկզբնական սերմն, որ շարժել է ժողովրդի երեւակայութիւնը, գործունէութեան հրաւիրել նորա հոգեւոր ոյժերը։ Ճշմարիտ է, դարերի ընթացքում, ենթարկւելով նորանոր փոփոխումների եւ կողմնակի ազդեցութիւնների, նա աւելի եւ աւելի օտարանում է ժողովրդին։ Բայց այնուամենայնիւ «ասողը» մինչեւ այժմ էլ խիստ տարբերութիւն է գնում «հեքեաթ»ի եւ «զրոյց»ի (նազըլի, մասալի) մէջ, վերջինիս ընծայելով լիովին հաւատ եւ պատմելով նորան իրբեւ եղելութիւն։ Ռուսաց առածը շատ պարզ արտայայտում է ժողովրդի այս տեսակէտը՝ «skazka — skladka, a pësniya — byl» (հեքեաթը շինծու է, իսկ երգն՝ եղելութիւն)։

Չկայ ազգ, որ չունենայ իւր վեպն, իւր զրոյցն, այս աւանդութեան մէջ է նա գտնում իւր հոգեւոր բաւականութիւնն, նոցա մէջ պարում իւր պայերի պատմութիւնն։ Փոյթ չէ, եթէ նորա հերոսները հետեւ են նորանից անբողջ դարերով, անքնական իրանց յատկութիւններով, անհամապատասխան ներկայիս։ «էն վախտը (ժամանակը) փահլեւանների վախտ էր» ասում է խորին համոզմունքով ժողովուրդը։ Նոյն իսկ մեր ժամանակակից ըմբիշները (փահլեւանները) հետաքրքիր ապացոյց են, որ նա զեռ ըտլըրովին չէ խղել իւր կապը հնոց քաջերի հետ։

Թէ Հայերն եւս հնումն ունեցել են իրանց սեպհական գիւցազնական վեպերն՝ այդ մեզ ակներեւ է թէ Խորենացու բազմաթիւ, թէպէտ եւ հատուկտոր, ցիրցան մասնացոյցներից (2) եւ թէ ներկայումս մեր

(1) Istoritscheskija pësni ob Ivanë, Grosnom, Ermakë, Skopinë Schujskom (Gillferding, Rybnikoff, Kireevskij)։

(2) Ա. Գրքի ԼԱ. Գլխում Խորենացին յիշում է «թուրեւաց երգերի» մասին, առաջ բերելով միայն մի քանի անկապ տողեր, որոնք իբր երգերի բովանդակութիւնն են յիշեցնում։ Բայց եւ այս անկապ հաւաքածներն արդէն ապացոյց են, որ զեռ Խորենացու ժամանակ Հայերը «ախրժեղով» պահպանել էին իրանց գիւցազնական երգերն, որոնք կեդրոնացած էին «դինաւէտ» Գողթն գաւառում։ Նկատի եւս Վահագնի, Արտաշիսի (Գիրք Բ. Գլ. Ծ, 40), մասին երգերը։ Համեմատիք եւս փաւստոս («Հայք» զիւրեանց երգս առասպելեաց վիպասանութեան սիրեցեալք...» (Գիր. Գ. Գլ. ԾԳ.))։

մէջ պատուելի քերականից եւ գրոյցներից , որոնք ամենից լաւ պատկերացը-
նում են մեր ժողովրդի բանաստեղծական ոգին , որ դեռ չարունակում է
ծաղկել եւ պտուղներ տալ : Չանց ասնել մի որ եւ է ազգի մտաւոր
կեանքի ընդունակութիւնը՝ նշանակում է վայրենութեան ստոր աստի-
ճանին հասցնել նորան :

Այլ խնդիր է , թէ ո՞ր չափով Հայերը փոխ են առել օտարազնեայ
գրոյցներ : Այս բանաւոր պաշարն այն աստիճան ճոխ է , որ պահանջում
է նիւթի որոշ գասաւորութիւն , ըստ աեսակի եւ նշանակութեան , եւ
լուրջ համեմատական ուսումնասիրութիւն : Սակայն ես կընարեմ այս ա-
ւանդութիւններից մի որոշ խումբ , որ անմիջապէս հետաքրքրութիւն է
ներկայացնում թէ իւր ընդհանուր հռչակով եւ թէ մեր վէպերի վերայ
ունեցած ազդեցութեամբ :

Խօսքս Իրանի դիւցազնական աւանդութեանց մասին է :

Բաւական է մի թեթեւ հայեացք նետել հին Հայաստանի աշխար-
հագրական քարտիզի վերայ , որպէսզի տեսնել նորա քաղաքական ան-
բարեպատեհ գրութիւնն երկու հզօր պետութեանց մէջ . թէ արեւմտքից
եւ թէ մասնաւոր արեւելքից նորա գլխին եւ իջել ամենածանր հա-
լածներ , այստեղ միմեանց էին հանդիպում երկու մեծ ոսոխների շա-
հերն , այստեղ նոցա յաջողում էր միշտ վառ պահել նախարարների ա-
պստամբ ոգին եւ փոխադարձ ատելութիւնն , այս զժառոգ երկիրն շա-
րունակ մուտք էին գործում կայսեր լէգէոններն կամ կրակապաշտ գը-
րացիների անբաւ վաշտերն : Այս հանգամանքն մեծ արգելք էր Հայաս-
տանի քաղաքական աճման եւ հասունութեան , որ ի վերջոյ տարաւ նո-
րան ի կորուստ :

Բայց Յունաց եւ Պարսից ազդեցութիւնն միայն քաղաքական չէր ,
նա աւելի խորն էր գնում , տարածւում հայ ազգի նոյն իսկ մտաւոր եւ
հոգեւոր կեանքի վերայ , որ ժամանակի ընթացքում աւել իւր պտուղներն :

Մինչդեռ արեւմտքից Հայերի վերայ ծագեց քրիստոնէութեան լոյ-
սըն եւ ապա Յունաց դպրոցները բաց արին հայ մանկանց առաջեւ
մտքի լայն առաքելի , անեցին եւ հանդէս բերին մի շարք քանքարաւոր
մշակներ , Պարսից դարեւոր հարեանութիւնն աւելի եւս խորը գործը-
նեց հայ ազգի կեանքի վերայ , նա զգալի է նախ յեղուտն , թէ՛ գրաբա-
սում , եւ թէ՛ առաւել եւս աշխարհաբառում , որ այժմս կաթնեւ արդէն
ընտանեցած է մեղանում : Միւս կողմից Արեւելքն՝ Պարսից շնորհիւ՝
բաց էր անում Հայերի առջեւ իւր խորհրդաւոր պարտիզի դոներն եւ
ներս հրաւիրում հեքեմթիների աշխարհն , ուր մարդկային երեւակայու-
թիւնն այնպէս հրաշալի կերպով ծաղկեց արեւելեան ճոխ բնութեան
գրկում : Իրանի հռչակաւոր հերոսների աւանդութիւններն , որ ոչ միայն
ժողովրդի լսելիքն էին շոյւում , այլ ազատօրէն մուտք գործում նոյն
իսկ «Հաճանց շահերի» արքունիքը , հեշտիւ կարող էին հրապուրել Հայե-

ըր՝ Պարսից ամենամօտ գրացիները երեւակայութիւնն : Դա բնաւ դարմանալի չէ : Ամեն մի ազգ իւր մանկութենում պաշտում է աշն, ինչ որ բնականից դուրս է, մարդկային կարողութիւնից ի վեր : Նա սիրով կուշտանում է իւր զիւցաղները յաղթութիւններին, զեւերի, հրէշներին, ամբողջ բանականները տապալմանը նոցա գերբնական ոյժի առաջեւ : Նորա սուր լսելիքն արագ որսում է ամեն մի վիպական նորութիւն, լինի նա օտար, գէթ միայն գոհացում տայ նորա միշտ լարած երեւակայութեանն : Հայերն, անգամ քրիստոնէութեամբ, լուսաւորւած, չէին կարող անտարբեր մնալ դէպի այնպիսի համբաւաւոր հերոսներ, որոնք՝ անցնելով մի շարք դարեր՝ ցայսօր դեռ կենդանի են ժողովրդի խաւերում :

Պարսից գրականութեան մասնագէտներն արդէն բաւական աղաւցուցել են, թէ ո՛րչափ լայն ծաւալ է ունեցել հօշակաւոր իրանական վէպի ազդեցութիւնն : Պարսից ընդարձակ տէրութիւնն իւր մէջ պարունակում էր զանազան ազգութիւններ, չմուտ էր տարբեր լեզու, տարբեր կրօն ունեցող ցեղերի հետ, համեմելով նոյն իսկ Կովկասեան լեռնաշղթան : այստեղից, շնորհիւ կիսավայրերի թուրք-պոլովացիների, արեւելեան զորոյցներն անցել են հարաւային Ռուսաստան եւ ժողովրդի սեպհականութիւն դառել (1) : Հայերին այս աւանդութիւններն պէտք է ծանօթ լինէին դեռ աւելի հին ժամանակներ : մեր պատմագիրը, խօսելով Տորքի մասին, ի դէպս յիշում է Ռուստամին, « թէ կամիս (ստում է խորենացին Սահակ Բագրատունուն) , ստեմ եւ ես յաղաղս նորա (Տորքի)՝ անյաջ եւ փրցուն , որպէս Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճրիկ՝ հարեւր եւ քսան փղոց ոյժ սահն ունել » (2) : Կասկած չկայ, որ այս հերոսի անուանը դեռ խորենացու ժամանակ տարածւած էր Հայաստանում : բարեպաշտ հոգեւորականը չէ ծածկում իւր ատելութիւնը դէպի հեթանոսական « անյարմար եւ անոճ » աւանդութիւններն, այլ միայն երիտասարդ իշխանի կամքը կատարելով, ակամայ յիշում է նոցանից մի քանիսը՝ « զորոց ստեմք զբանս եւ զգործս, եւ այնոսիկ մանաւանդ, թէ լուրն զլսե լիս մեր տաղտկացուցանէր, այսօր ձեռամբ իմով շարագրեմ դայնոսիկ » (3) :

Պարզ է, որ ժողովուրդը, հետեւելով իւր ձգտմանն, հետեւ էր այս աեսակետից : Նա սիրով ականջ էր դնում այս՝ թէպէտեւ օտար՝ բայց իւր ճաշակին, հասկացողութեան համապատասխան կենդանի զորոյցներին :

Հարկաւ, ամեն մի արտաքուստ եկած աւանդութիւն, նախ քան ժողովրդի մէջ հաստատւելն, յարմարւում է նորա կենցաղին, բարքերին, սովորութիւններին, միով բանիւ՝ աշխարհայեցողութեանն, եւ երբ ժամանակի ընթացքում դառնում է նորա սեպհականութիւն, արդէն դժար

(1) Shu Vsevolod Miller: «Ekskursy v oblastj russkich narodnych bylin».

(2) Գրք Բ . ԳԼ . Ը .

(3) Խորենացի « ի Պարսից Առասպելից » Ա . Դիւխ վերջում :

չէ նորան չփոթել օտարազնեայ հերոսներին իւր աւանդական քաջերի հետ, վերագրել նոցա այն, ինչ որ յատուկ էր միայն իւր սիրած գիւցազներին:

Այս օրէնքն, լինելով ընդհանուր բոլոր ազգերի համար, հայ ժողովրդի մէջ ստացել է հետաքրքիր լուսաւորութիւն. բայց նախ տեսնենք, թէ ի՞նչ պայմանների մէջ գոյութիւն ունին բանաւոր աւանդութիւններն մեզանում:

Ինձ դէպք եղաւ 1899 թ. ձմրանը եւ 1900 թ. գարնանը ուղեւորւել նախ Ապարան (Եջմիածնայ գաւառ) եւ ապա Կողպ (Սուրմալուի գաւառ), որոնք ժողովրդական բանահիւսութեան կեդրոններ են համարւում Երեսանեան նահանգում. եւ յիրաւի, այս աղքատիկ, անշուք հայ գիւղերում, ուր կարծր, քարքարոտ հողը չափ անգամ անկարող է լինում գիւղացու նոյն իսկ անհրաժեշտ կարիքներին գոհացում տալու, դեռ ծաղիկ դրութեան մէջ է երգն իւր պէս պէս տեսակներով (իւր երգերով հոչակած է Սուրմալուի գաւառն), բերանէ բերան է չրջում զբոյցը, առակը, հեքեաթը, հանելուկը, միով բանիւ՝ այն ամենը, ինչ որ վարդարում է մեր գիւղացու չքաւոր կեանքը, նորա անբաժան ընկերն է հանդիսանում մանկութենից մինչեւ խորին ծերութիւն, ուղեկցելով նորան երկրէ երկիր եւ մխրթարելով օտարութեան մէջ: Մանաւանդ տարածւած են այստեղ աւանդութիւններ ժողովրդի սիրած հերոսներին՝ Դաւթի եւ Մհերի՝ եւ Պարսից «փահլեւաններին» մասին: Իրաւ է, դարեւոր դաղթականութիւնը Տաճկա եւ Պարսկահայաստանից, որ չէ ընդհատւում եւ այժմս, եւ որին կարծես դեռ երկար տարիներ դատապարտւած է հայ ժողովուրդը, խլում է նորա աւանդական գանձարանի մի մասը, հեղափոխելով թուլացնում նորա յիշողութիւնը նոր հոգսերի, կեանքի նոր պայմանների մէջ, բայց չ'նայելով այս անբարեպաշտեհ հանգամանքներին ապարանցին եւ կողպեցին դեռ լաւ յիշում է իւր հօր, իւր պապի կամ իւր ժամանակի հասրտաւոր «նազըլ սողի» պատման, ինքն եւս աւանդելով իւր լսած զրոյցներն՝ ձմեռային պարապ ժամանակ՝ կիսալոյս «յօղայում» խմբած գիւղացիներին: Գրեթէ ամեն մի գիւղ ունի իւր «ասողը», որ չնորհիւ իւր դիտութեան առանձին յարգանք է վայելում բոլորին, իսկ աւելի հոչակաւորը՝ ամբողջ գաւառում:

Բացի այդ, տարին մի անգամ այս կողմերն են դալիս մոկացիներ եւ մշեցիներ «քէչաչ գործելու» կամ «բուրդ գլելու» եւ այս պարապմունքի ժամանակ իրենց երկրի «նազըլները» ասում հետաքրքիր գիւղացի ամբոխին: Այսպիսով աւանդութիւնները կապը ոչ միայն չէ թուլանում, այլ եւ նորոգւում գրեթէ ամենայն տարի դաղթականների եւ ժամանակաւոր պանդուխտների չնորհիւ:

Ահա՛ այս գաւառներում, այս փոքրիկ գիւղերում, որոնք ապաստանած են Արագածի հարաւային լանջի վերայ եւ կամ ցիր-ցան սփռւած

Արարատեան ընդարձակ հովիտում, ցարդ թափմ է մնացել հնութեան մի հարուստ պաշար, որ կրկին կենդանացնում է մեր առաջիկ գիւցազնական դարը իւր հեքեաթային գրաւիչ քողի տակ :

Պարսից գիւցազնական վէպն յայտնի է մեզանում «Ռուստամի Զալ» ընդհանուր անուամբ : Չ'նայելով վերնագրին, աւանդութեանց բովանդակութիւնը հանդէս է բերում ոչ միայն Իրանի համբաււոր դիւցազնի, այլ եւ միւս փառլեւաններէ քաջութեան գործքերը . բոս մեծ մասին Ռուստամ անգամ չէ յիշուած եւ կամ աննշան գեր է խաղում, կարծես թողելով ասպարէզն աւելի երիտասարդ հերոսներին :

Սոցանից ամենամեծ հոգակը անշուշտ վայելում է Բ ու ը ղ է ն : Այս հերոսի անունն իրան տեղ չէ գտել «Արքայից գրքում», իսկ այն, ինչ որ մեզ ցարդ յայտնի է պարսից զրոյցներից (1), միանգամայն տարբերում է հայկական խմբագրութիւնից, որ թէ նկիթի եւ թէ արտաքին ձեւի նկատմամբ տալիս է մեզ մի գեղեցիկ ամբողջութիւն : Այստեղ մեր առաջիկ ունենք մի անձնաւորութիւն, բոլորովին տարբեր յատկութիւններով օժտւած . նորա արտասովոր ձայնն, որի մէջն է նորա ոյժը, բացի լոկ մարմնական ոյժից, միանգամայն ջոկում է նորան փառլեւանների շարքից եւ բոլորովին առանձին, պատւաւոր տեղ տալիս նորան : Ճշմարիտ է, այս յատկութիւնն վերագրում է նորա ամբողջ ցեղին, բայց ներկայ աւանդութիւններում նորա եւ ոչ մի ազգականն հանդէս չէ գալիս այս օժիտով : Իւր ճշով Բուրդէն յիշեցնում է ուսաց Solovej (raz-bojnik) (Սոխակ) աւազակին եւ հայոց Զէնով Յովանին, թէպէտեւ սոցա դերերը տարբեր են միանգամայն . փառլեւանի ահաւոր գոչը աւելի կորստաբեր է հանգիստանում, քան անտառում նստած աւազակի շուքը կամ Դաւթի հօրեղբոր «բոռալը» . նորա ձայնից 12 բլուր փուլ է գալիս եւ մի ամբողջ բանակի ի փախուստ դառնում :

Բացի այդ Բուրդէն իւր մէջ կրում է եւ մի այլ յատկութիւն՝ ռարմնի ծանրութիւն, որ արեւելքում համարւում է գրեթէ անբաժան իսկ փառլեւանական ոյժից . Ռուստամին, Մհերին, Սվետոգորին (ուսաց վէպում) հողն այլ եւս չէ պահում . նոյն իսկ նորա անունն (շ = Բուր-

(1) Բարդուն պարսից վէպում («Բարդուն-նամէ») Զոհրաբի որդին է, ծնած Տուրանում իւր հօր պանդխտութեան ժամանակ . Աֆրասիաբ թագաւորը, հրապուրւած նորա գեղեցկութեամբ, տանում է իւր Դուռը ծառայութեան եւ իրեւ ընտիր փառլեւան ուղարկում Իրանացիների դէմ : Բարդուն գերում է եւ իմանալով իւր ծագումը, միտմ է ընդ միշտ Իրանում : Բարդուն-նամէն խմբագրութիւնն անպայման կրում է Զոհրաբի ազդեցութեան հետքերը : Mohl ենթադրում է սորա կազմութիւնն Ե-Զ դարը (Préface XXV-ZXVI).

դու = յաղթանդամ) արդէն պատկերացնում է իւր մէջ ժողովրդի տեսա-
կէտն : Այսպիսով, պարսից հերոսի մէջ ամբողջութեամբ կ'են

ա) ահագին ֆիզիզական ոյժ

բ) անսովոր ձայն

գ) մարմնի ծանրութիւն՝ երեք յատկութիւններ, որոնք պիտի գը-
րատէին ժողովրդի երեւակայութիւնն եւ առանձին հետաքրքրութիւն
ընծայէին հերոսի անձնաւորութեանը :

Պարսից զրոյցները, նախ քան հայ ժողովրդի մէջ հաստատուին,
ըստ երեւութիւն անցել են եւ մի այլ խմբադուրթիւն՝ փրկական, որի
ազդեցութիւնն նկատելի է նոյն խիստ սեպհական անուններում, ինչպէս՝
Մըջանէ Ջաղօ, Թղբուրէ Շէրան, Ղօփօ, Ֆախկէ եւ այլն : Իրանի գիււ-
ցաղները պէտք է որ լաւ ընդունելութիւն գտնէին այս կիսավայրենի
ազգի մէջ, որ ցայսօր հաւատարիմ է մնացել իւր նախնեաց յիշատակին,
ասպատակելով հայ գիւղեր եւ առեւանդելով հայ կանայք :

Այս աւանդութիւններն, որոնք մի ժամանակ անշուշտ առանձին
էին պատմում, հայ ժողովրդի մէջ ձուլւել են եւ կազմել մի ամբողջ
վէպ՝ պատմողն սովորաբար կապում է նոցա, հաւատացած լինելով, որ
բոլոր այս հերոսները կազմում են Ռուստամ-Ջալի ցիղն :

Արդէն այս տեսակէտը ինքն ըստ ինքեան հետաքրքիր է, բայց մեզ
համար առաւել նշանաւոր է այն հանգոյցը, որով ժողովուրդը կապում
է իւր եւ օտար գիւցաղների անուններն, այն ազդեցութիւնն, որ ան-
կասկած դրոշմել են Իրանի զրոյցները մեր ժողովրդական վէպի վերայ :

Այս բնաւ գիտաւորութիւն չունիմ ներկայ խնդիրս ենթարկել այս-
տեղ մանրամասն քննութեան, այլ առաջ կ'ըբերեմ մի քանի հետաքր-
քիր համեմատութիւններ (1) :

Նախ տեսնենք, թէ ինչպէս է ինքն՝ ժողովուրդը նայում հերոսնե-
րի այս տոհմի վերայ : ասողներէից մէկը (Մուրադ Մխիթարեան) նոցա
ցեղը սերում է ուղղակի Մհերից, որին յաջորդում է նորա որդի գիւա-
մարաիկ Ռուստամի Ջալն : Սա արդէն տպացոյց է, որ ժողովուրդը ճշգ-
նում է հաշտեցնել իւր յիշողութեան մէջ միմեանց հանդիպած զանազան
փահլեւաններին, որոնք օժտւած են անսովոր ոյժով, ձայնով, մարմնի
ծանրութեամբ եւ այլն, հայացնելով օտարներին : Միւս վարիանտում
(Բարսեղ Յարութիւնեան) յիշում է իւրեւ Ջալի եղբայր Սասունցի Դա-
ւիթը, որի «տասնըհինգ փիթանոց զուրդը» ժառանգում է նորա ուղի
Բուրդէն : Միեւնոյն վարիանտում Ձէնով Յովան, հերոսների շարքն ան-
ցած, օգնում է Ռուստամին եւ Ղօփօյին հորից հանել իւր եղբորորդի
Բուրդէին եւ աւերել նորան գերող թաղաւորի քաղաքը : Հետաքրքիր է,

(1) Խնդիրս աւելի մօտ կ'ըջափնւի մեր ժողովրդական գիւցաղնա-
կան վէպն ուսումնասիրելիս :

որ միեւնոյն դերում մենք տեսնում ենք Յովանին եւ մեր ժողովրդական վէպում (1) : Բոլոր տարբերութիւնը միայն այն է , որ նորա ահաւոր ձայնը այստեղ ոչ թէ անհատական , այլ արդէն իբրեւ ցեղական շնորհք է հանդիսանում : Վէպիս գործողութիւնն սկիզբն է առնում Սասունից , ըստ այնու եւ նորա հերոսները շարունակում են կրել «Սասնայ Մսեր» ընդհանուր մականունն :

Այսպիսով ուրեմն օտարազգի դիւցազները , շնորհիւ իրանց երկարամեայ գոյութեան հայ ժողովրդի մէջ , մի քանի տեղերում ընտելացել են նորան , կազմելով մի ցեղ նորա ազգային հերոսների հետ միասին :

Առաջ տանելով համեմատութիւնը , կ'տեսնենք , որ հայ դիւցազները վերայ գրոշմեւ են պարսից փաշեականների յատկութիւններն , եւ նախ եւ առաջ Մհերի նկատմամբ , որի անձնաւորութիւնն եւ հերոսաւ գործութիւններն մօտ յիշեցնում են Բուրդէին : Եւ յիշաւի , այնպիսի ընդհանուր միջադէպեր , ինչպէս՝

ա . Մհերի պատահելն պառաւի հետ , որ Բուրդէի վարիանտներում դեւի կերպարանք է ընդունում .

բ . Երկուսի եւս Սասունի սահմաններից դուրս անտառադական չըջիլն .

գ . Թշնամի քաղաքներ աւերելն

դ . Հորի մէջ մնալն

ե . Զանազան թագաւորներին պաշտպան հանդիսանալն

այս բոլորն անկասկած վկայում է յօգուտ մեր համեմատելի աւանդութեանց ազդակցութեանը : Առաւել եւս նմանութիւնը զգալի է դառնում , երբ համեմատենք այս երկու հերոսները ֆիզիքական ոյժի նկարագրութիւնը , կուրու ձեւերը սովորութիւններն եւ այլն .

ա . Թշնամուն կէս անելն («ճըւտելն») երկուսի եւս սովորական դատաստանն է .

բ . Գործածելի զէնքն է՝ արմատահան տրած ծառն .

գ . Սովորական զբաղմունքն է՝ որսորդութիւն .

դ . Հայ եւ պարսից դիւցազները չափազանց ծանր են մարմնով (2) . ծերացած Մհերը , որսալիս , խրում է հողի մէջ . Բուրդէի տակ ջարդուում է աթոռը , որ փոխաբերում են անկողնով .

ե . Վերջապ ս երկու հերոսն էլ ժողովրդին պատկերանում են իբրեւ անյաղթ ախտանների , օժտւած գերբնական զօրութեամբ , որոնցից պատկառում է նոյն իսկ մահի գերանդին :

Զնայելով , որ երկու դիւցազն էլ նման դերերում եւ յատկութիւններով են հանդէս գալիս , սակայն այս հանգամանքն չ'պէտք է հիմնովին խախտէ Մհերի վէպի ինքնուրոյնութիւնն . բաւական է ի նկատի առնել

(1) Տես իմ գրի առած «Թըլօր-Գաւիթ եւ Մհեր» , Էջմիածին 1899 թ .

(2) Թուտամ Շահնամէում կոչւում է جگر = փղի մարմին ունեցող :

ա. Նախ այս գիւցազնի ա ն ու ն ն , որ ամենայն ճշտութեամբ եւ անփոփոխ հանդէս է գալիս մեր գիւցաղնական աւանդութիւններում :

բ. Գաւիթից յետոյ Մհերը ժողովրդի ամենատիրելի հերոսն է հանդիսանում . շատ վարիանտներում նորան դեռ չբացատրում են Սասունի քաջերն :

գ. Մհերի կոխը թեւեւոր Աստղիկ երգնկացու հետ , որ ըստ իս կազմում է այս աւանդութեանց հիմնաւոր եւ հնազոյն մասը , բոլորովին առանձին տեղ է տալիս նոցա մեր վէպերի շարքում (1) :

դ. Գերջապէս , ժողովուրդը մինչեւ այժմն էլ հաւատացած է , որ Մհեր Աստուծոյ հրամանով փակւած է հոշակաւոր Վանայ քարի մէջ եւ մի օր պէտք է դուրս գայ աշխարհն աւերելու :

Կարեւոր եմ համարում նկատել այստեղ , որ Մհեր բաւական մօտ յիշեցնում է մեզ Արտաւազդին , Արտաշիսի որդուն .

ա. Որպէս Գաւիթը Մհերին , Արտաշէս անիծում է իւր որդուն :

բ. Մհեր եւ Արտաւազդ դժգոհ են իրանց դրութիւնից հայերի մահից յետ :

գ. Երկուսն եւս խօսում են նոցա հետ եւ պատասխան ստանում զեռեղանից :

դ. Անհետանում այրի մէջ , ուր ցայսօր մնում են ողջանդամ (կուրենացի Գիրք Բ. Գլ. ԿԱ) :

Նմանութիւնն ակներեւ է . անկասկած Մհերի ճիպարը կենդանի էր դեռ Խորենացու ժամանակ «պառաւանց գրոյցներում» . անունն այստեղ դեր չի խաղում . խնդիրը այն ազգու տպաւորութեան մասին է , որ այս հնազոյն գիւցազն ընդ միշտ դրոշմել է հայ ժողովրդի երեւակայութեան վերայ :

(1) Մհեր իւր հօր մահւան վրէժն է առնում , աւերելով Չմեչկիկ Սուլթանի քաղաքները . բոլորը նորա ահից փախչում են : Մի տեղ նա դառնում է միայն ձերուների Փիրմուսին նորա գտնել՝ Դեղձոնի հետ , որ նա պսակում է Խոր-Մանուկի հետ , իսկ ինքն առնում Գոհար-Խանու մին : Գոհար աստղից գուշակում է , որ մեծ վտանգ է սպառնում նորա ցեղակիցներից մէկին . Մհեր կոռջ հետ շտապում է Փիրմուսի մօտ : Առաւօտեան գալիս է Աստղիկ երգնկացին , «Դեղձոնի նշանածը» , եւ սկսում իւր կոխը Մհերի հետ , հարաձեւելով նորան վերելից : Գոհար , տեսնելով իւր ամուսնու տեղ դրութիւնն , խնդրում է Աստղիկին խնայել իւր անփորձ հակառակորդին :

— Աստղիկ երգնկացի , Մհեր խամ աղայ է , շատ մը՝ զօռի Մհերին , հըլա իսկի կոխ չ'էրի , նոր կոխ կ'էնի : — Միւտակ ծծեր դուս թաւեց Գոհար խանում , ըսեց . — Բըզի իդա սիւտակ ծծերու մէջ կ'պահիմ , Մհերին շատ մը՝ զօռի :

Աստղիկ երգնկացին օր տեսաւ սիւտակ ծծեր , կայնաւ . օր կայնաւ , Մհեր արկեւանց գուրդ զարկեց . օր զարկեց , առաւ սիրտ , պառեկից դուս աւեց : («Մամայ ծներ» Գարեգին Սարկաւազ . էջ 56) : Երկու անտիպ վարիանտներ , որ ձեռքիս տակ ունեմ , պարունակում են իրանց մէջ նոյն միջադէպը :

Աստեղամարտ Մհերն ինձ յիշեցնում է միւս կողմից բարեւական յայտնի հերոս Ի գ գ ու բ ա Ր ի ն (= Ներսիս Պէտրոս) : առաջ եւմ բերում վէպիս համառօտ բովանդակութիւնն :

Երբ Ելամացիք նաճում են Երեխ քաղաքը , Իզդուբար (Մարադից) կիսատուած Էա-բանիի օգնութեամբ սպանում է թշնամեաց կումբաբա թագաւորին եւ փրկում քաղաքն : Հերոսի վերայ սիրահարում է Ի շ ա ա Ր գիցուհին (1) , բայց հերոսն , որպէս զի չինթարկի իւր նախորդներին՝ Իշտարի սիրականներին՝ տխուր վիճակին , մերժում է իւր փոխադարձ սէրն : Անպատուած գիցուհին խնդրում է իւր հայր Անու'ին ըստեղծել «Երկնից աստղ» , որ պիտի ոչնչացնէ Իզդուբարին . բայց գիւցաղն այս անգամ եւս յաղթող է հանդիսանում իւր հաւատարիմ ընկերոջ օգնութեամբ :

Այսպիսից սկսում է մի մեծ պակասորդ : Իզդուբարին ապա մենք գտնում ենք հիւանդ , իսկ Էա-բանին՝ մեռած . իւր ընկերոջն կենդանացրնելու , իսկ իրան առողջացնելու համար նա ստիպւած է որոնել իւր պապ Պիր-Նապիշտին , որին մահն երբէք չի վստահանում մերձենալ : Երկար թափառելուց յետոյ նա վերջապէս հասնում է Պիրի բնակարանն եւ նորա միջոցաւ առողջանում : Ծերունին պատմում է ջրհեղեղի զրոյցըն , նաւ շինելն եւ իւր փրկւելն ընդհանուր կորստից : Ապա առողջացած գիւցաղն վերադառնում է Երեխ եւ ստանում իւր ընկեր Էա-բանին (2) :

Այս ամբողջ զրոյցն պատկերացնում է իւր մէջ Մհերի միջադէպը թեւաւոր Աստղիկի եւ ծերունի Փիրմուսի հետ . անկասկած , նա պատկանում է ալեւոր հնութեան , որի միջոցաւ թափանցել գեւ անդօր է հանդիսանում գիտութիւնն :

Եթէ բաժանենք Մհերի աւանդութիւններն իրանց հիմնաւոր մասերի , կ'տեսնենք , որ սոքա լաղկացած են հերոսի մի շարք , երբեմն անկապ , արկածներից այս-այն երկրներում շրջելիս : Նոցանում բացակայ է այն ընդհանուր գաղափարն , որ յայտնապէս աչքի է խփում Դաւիթի զրոյցներում եւ նոցա ահագին առաւելութիւնն կազմում : Անկասկած , Մհերի վիպական աւանդութիւններն ժամանակի ընթացքում քայքայուել են եւ մեզ հասել միայն՝ չնչին քանակութեամբ , այն եւս բաւական ալալւած :

Մեր խօսքն այստեղ կարող է լինել , հետեւապէս , միայն այն զօրեղ ազդեցութեան մասին , որ պարսից եւ բարեւական վէպերն դրոշմել են

(1) Իշտար Բաբելոնի գիցուհին է , որ համապատասխան է Venera մոլորակին . հաւանական է , որ այս անունից է առաջնել (ի նկատի առնելով բարեւայիների աստեղադիտութեան հռչակը) հնդ-եւրոպական «աստղ» (áστὴρ, ستاره, astre, stella) բառն :

(2) Ամբողջ վէպը բաղկացած է 12 տախտակներից եւ պատկանում է Աստուրանիպազի (668-626) զրադարանին . գտնւած է 1854 թ . Նինիււէյում (Hormuzd Rassam) :

Մհերի աւանդութեանց վերայ, խորը թաղելով նորա սկզբնական բերնը :
Բնական է, որ նոյն իսկ մեր պատմական զրոյցներն, ինչպէս Դաւ-
թինը, աղատ չեն մնացել հարեւանի ազգեցութիւնից . այնպիսի մի խո-
շոր անձնաւորութիւն , ինչպէս Ռուստամ , պատկանում են զանազան
ազգերի եւ անվերջ դարերի . հարկաւ, նորա անունն կարող էր մոռացւած
լինել եւ կամ նոր հերոսներով փոխարինւած , բայց նորա գիւցազնա-
կան օխաբան անշուշտ ապրում էր հայ ժողովրդի մէջ եւ ծառայում
նորեկ քաջերի համար . պատրաստի օրինակ : Նորա երկխոյսածութիւնն ,
անհասարկութիւնն, ազնուութիւնն, անյաղթ ոյժի հետ միացած, պէտք
է գրաւէին ոչ միայն պարսից , այլ եւ զրացի ազգերի համակրանքն :
Հայ գիւցազնական վէպն ամբողջապէս կրում է պարսից ազգեցութեան
հետքերն . նոյն են կուի ձեւերն , զէնքերն , ծառը արմատահան անելն,
հորերի մէջ մնալն, դուերի հետ ճակատելն, հօր եւ որդու կռիւն եւ այ-
լն եւ այլն :

Բայց ի նկատի առնելով իրանական վէպի լայնատարած հռչակը,
գիւրին է չափազանցութեան մէջ մոլորել : Որչափ էլ զօրեղ լինի ազգե-
րի փոխադարձ կուլտուրական ազգեցութիւնն, վերջինս, յայտնի պայ-
մաններում, որոշ սահմաններից չի անցնում . ամեն մի ազգ ունի իւր
մտածելու եղանակն, իւր , միայն նորան յատուկ ստեղծող ոգին , իւր
աշխարհայեցողութիւնն . ժամանակն անդօր է հանգիստանում բնաջինջ
առնել այս գերելիսող ոգին : Քանի որ մի ազգ զեռ գոյութիւն ունի :
Վերոյիշեալ պարսից ազգեցութիւնն ընդհանրապէս զգալի է արտաքին
մանրամասնութիւններում եւ կամ պատահական միջադէպերում, որ դա-
րեր ի վեր կռտաւելել են մեզանում : Չպէտք է մոռանալ, որ

ա . հայ գիւցազնական վէպն ամբողջապէս սերտ կապւած է ուրոշ
սեղի հետ :

բ . Սասնոյ պատմութիւնն , նորա վերջին յուսահատ կռիւն եկեր
թշնամիների հետ կազմում է այս զրոյցների գլխաւոր հանգոյցն եւ
ամբողջացնում նոցա :

գ . Վերջապէս, վէպին մեծազոյն հերոսն՝ Դաւիթ Սասունցին կրում
է իւր մէջ այնպիսի տարբեր ընաւորութիւն , որից զուրկ են պարսից
փահլեւաններն, նորա ամբողջ անձնաւորութիւնն այն աստիճան ձուլել
է ժողովրդի հետ, որ ամենայն իրաւամբ նորան է պատկանում հայ ազ-
գային հերոսի համբաւն :

Բ. «ԱՐՔԱՅԻՅ ԳՐԲԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Ի նկատի առնելով այն լայնածառալ հռչակը, որ Իրանի հերոսները տարածել են անգամ օտար ազգերի մէջ, աւելորդ չեմ համարում առաջ բերել այստեղ սոյն աւանդութեանց գրականական մշակման պատմութիւնն :

Դժար է որոշել , թէ ո՞ր ժամանակ են կազմել այս զրոյցներն , ինչպէս դժար է որոշել որ եւ է հեքեաթի հեղինակին • մի քանի անուններ , ինչպէս Ռուստամինը , անկասկած պատկանում են խորին հնութեանը եւ դարեր ի վեր կենդանի մնացել ժողովրդի մէջ շնորհիւ իրանց գերբնական զօրութեան : Միայն ժամանակի ընթացքում , յայտնի անցքերի ազդեցութեան ներքոյ , նոքա միացել են պաշտական անճաւարութիւնների հետ եւ կազմել զիւցազներգութեան նոր շրջան :

Պարսից Տուրանի դէմ մղած պատերազմներն եւ տարած յաղթութիւններն արդէն ի հնումն ներկայացնում էին հարուստ եւ արժանի նիւթ վիպասանութեան համար : Թէ քաղաքական կեանքի խոշոր անցքերն եւ թէ նոցանում հռչակւած գործիչներն միշտ վառ են պահում ժողովրդի ստոգծող ոգին , նոր պաշար մատակարարում նորան • անցնելով նորա երեւակայութեան գործունէութիւնից , նոքա կրկին կենդանանում են եւ կերպարանափոխւում՝ պատմական անցքն առասպելանում է , գործիչն՝ զիւցազներանում : Ապա հանդէս են գալիս եւ միանում նորերի հետ ժողովրդի հին հերոսներն , շարունակելով դեռ ճակատել դեւերի եւ ալլահէշների հետ :

Զարմանալի չէ , որ պարսից զրոյցները ակորժելի էին ոչ միայն ժողովրդի ստոր խաւերին , այլ շարժում նոյն իսկ թագապիւրների հետաքրքրութիւնն , որոնք սիրով ծանօթանում էին իրանց նախորդների փառաւոր անցեալի հետ : Բայց կապել այս աւանդութիւններն միմեանց հետ , կազմել նոցանից մի որ եւ է ամբողջութիւն անհնարին էր , քանի որ նոքա ցրւած էին պարսից ընդարձակ տէրութեան զանազան կողմերում • պէտք էր մի հեղինակաւոր նախաձեռնող , որ կարող էինէր իրադործել այս դժար խնդիրը • եւ ահա Խոսրով Անուշիրւան (331-378) հրաման է արձակում հաւաքել իւր տէրութեան մէջ չըջող քանաւոր աւանդութիւններն եւ պահել արքայական գրադարանում : Սա եղաւ առաջին փորձն , որին հետեւեցին նորա յաջորդները :

Յազկերտ Դ-ի (632-631 , սա վերջին Սասանեանն էր) հրամանաւ դեհկան (1) Դանիշվերը հրաւիրւեցաւ կարգի բերել Անուշիրւանի ժողո-

(1) Դեհկանները կազմում էին պարսից բարձրագոյն կալածատէր ազատանքների դասակարգը , որոնք իրանց սերունդ էին հնագոյն տոհմերից • հարկաւ , նոքա անտարբեր չէին կարող լինել գէպի հայրենի աւանդութիւններն :

վածուն եւ լրացնել պակասորդը մովպեաների (1) օգնութեամբ: Ֆիրդուսին այսպէս է նկարագրում «Արքայից գրքի» կազմութիւնն.

«Հնուց ի վեր կար մի գիրք, որ պարունակում էր իւր մէջ բազմաթիւ պատմութիւններ. իւրաքանչիւր մովպեա ունէր այս գրքից մի մի մաս եւ ամեն մի զարգացած մարդ պահում էր իւր մօտ սորանից մի հատւած: Գեհկանները տանից մի քաջանձնեայ եւ հօգօր, իմաստասէր եւ լուսաւոր փաշեան, որին հաճոյ էր ուսումնասիրել հին դարերն եւ «Ժողովիկ հնոց զրոյցներն, հրամայեց գալ գումարել իւր մօտ ամեն մի գաւառից մի մի ձեր մովպեա, որոնք իրանց մօտ ունէին այս գրքի մասերը: Ծերունիները մի առ մի պատմեցին նորա առաջ եւ հոգակաւոր «Թագաւորների եւ պատերազմների մասին իրանց գիտցած աւանդու «Թիւններն: Նա լսեց նոցա պատմածը եւ կազմեց մի արժանայիշատակ «գիրք. թէ մեծերը եւ թէ փոքրերը փառաբանում են նորա կատարած «գործը» (2):

Գանիշվեր գրեց իւր գիրքը, ժամանակի պահանջին համաձայն, պեհլուի լեզուով, (3) որ պարունակում էր իւր մէջ պարսից պատմութիւնը կայունորդից մինչեւ Խոսրով Պարւիզ եւ կրում «Խոզայի Նամէհ» (Արքայից գիրք) վերնագիրը:

Արաքացոց արշաւանքից յետ Խոտայի Նամէն տեսնում ենք Արգաւշահ-իրն-ալ-Մոկաֆֆայի ձեռքում, որ ի թիւս բազմաթիւ գրութեաների թարգմանել տւեց արաբերէնի եւ Գանիշվերի գիրքը «Պատմութիւն արքայից» վերնագրով: Այս թարգմանութիւնն մեզ չէ հասել:

Արաքացոց իշխանութիւնը Պարսկաստանում, որքան էլ որ զօրեղ լինէր, ոչ միայն չմոռցրեց ազգային վերականգնութեան ոգին, այլ եւ պատճառ դառաւ նորա վերածննդին: Հազիւ Խալիֆաթը սկսեց թուլու թեան նշաններ ցոյց տալ, պարսից տարրը կրկին գլուխ բարձրացրեց եւ սկսեց մի նոր կոիւ օտարի իշխանութեան դէմ: Արեւելեան գաւառները կառավարիչները, օգտւելով իրանց հեռաւորութիւնից, աւելի եւ աւելի անկախ դիրք բռնեցին դէպի Բաղդաատ լիազօր տէրը. պարսից իշխանները ամեն ջանք գործ էին դնում կեանքի հրաւիրելու ազգային աւանդութիւնները, նոցանում որոնելով ամուր յենակէտ արաքացոց քաղաքական ազդեցութեան դէմ (4). կարճ միջոցում նոցա արքունիքը լը-

(1) Այս անունն, որ յիշուում է եւ մեր մատենագրերում, յատկացրած էր պարսից հոգեւոր դասին:

(2) Mohl, «Le livre des rois». Préface VII-VIII.

(3) Պեհլուի լեզուն կազմել է Միջագետքում սիմիտական եւ պարսից լեզուների խառնուրդից: Արաքացոց արշաւանքի ժամանակ նա արեւելքի լեզուները տարածում էր արեւմտեան Պարսկաստանում իբրեւ պաշտօնական լեզու, մինչդեռ արեւելեան մասնում շարունակում էին խօսել զուտ պարսկերէն:

(4) Nöldeke միանգամայն ընդգէմ է այս կարծիքին («Schahname» Grundriss der iranischen philologie 1896 II B. I Lief. էջ 150.

ցեղեցաւ բազմաթիւ պարսիկ բանաստեղծներով եւ գիտնականներով, որոնք այստեղ գտնուած էին սիրալիր ընդունելութիւն եւ լուսաւոր հովանաւորութիւն: Մանաւանդ հռչակեցաւ, իրբեւ մեկեանատ, Յակոբ, Լէյլայի որդին, Սոֆարի ցեղի հիմնադիրը. հասարակ զինւորից դառնալով Պարսկաստանի տէր, Յակոբ հրամայեց իւր վեզիր Աբու Մանսուրին թարգմանել աւել պարսկերէնի այն, ինչ որ Դանիշվեր գրած էր պեհլեւի լեզուով, սորան կցելով եւ զանազան զրոյցներ, որ պահպանուել էին խորով Պարվիզի եւ Յազկերտի ժամանակներից: Աբու Մանսուրը, իւր պետի հրամանը կատարելով, հրաւիրեց իւր ժամանակի ընտիր ոյժերը, որոնք «Արքայից գրքում» ամփոփեցին ըստ իրանց ձեռքի տակ ունեցած գրաւոր եւ բանաւոր պաշարն:

297/909 թ. Սոֆարիները զահնկեց եղան եւ նոցա փոխարինեցին Սամանիները (Սասանեան ցեղից): Սոքա նոյն եռանդով շարունակեցին իրանց նախորդների գործը. յայտնի քերթող Դակիկին (1) ձեռնարկեց ոտանաւորով բանահիւսել Դանիշվերի գիրքն, որ թարգմանւած էր Յակոբի հրամանով. բայց հազիւ նա գրած էր 2000 տող, ինչպէս սարուկի մահացու հարածը վերջ գրեց նորա գործունէութեանը:

Սամանիների անկումից յետոյ Պարսկաստանը անցնում է Դադնեւիների ձեռքը: Այս հարստութեան երկրորդ ներկայացուցիչը՝ Մահմուդ Շահը (997-1030) ամեն ջանք գործ էր դնում իւր քաղաքական գրութիւնը ամրացնելու. նորա ժամանակ պարսից լեզուն աւելի լայն ծաւալ ստացաւ եւ պաշտօնական դարձաւ. նոյն իսկ նորա Դրանը: Նորա արքունիքը ներկայացնում էր կատարեալ շնամարան, ուր ընտիր քերթողները կարողում էին իրանց ոտանաւորները եւ մրցում միմեանց հետ թագաւորի ներկայութեամբ: Յանկանալով կազմել մի աւելի հարուստ ժողովածու, Մահմուդ հրամայում է հաւաքել իւր տէրութեան մէջ թէ գրաւոր եւ թէ անգիր տեղեկութիւններ, որոնք կարող էին հին պարսից պատմութեան նիւթ մատակարարել: Պաշարը արդէն հարուստ էր, մնում էր միայն մի տաղանդաւոր գրիչ, որ անշունչ նիւթի հոգի ներշնչէր: Այս գիտաւորութեամբ Սուլթանը մրցանակ նշանակեց ժամանակակից յայտնի քերթողներին: Սոցանից մէկը, Անզարին, յայտնեց Մահմուդին, որ նա իրան կոչւած չէ համարում այս դժար խնդիրը իրագործելու, բայց նա ունի մի ընկեր, որի բարձր տաղանդը միանգամայն համապատասխան է այս վեհ գործին (2):

Այս քերթողը Ա. բ ու ' լ Կ ա ս ի մ Ֆ ի Ր դ ու ս ի ն էր:

(1) Այս կեղծանունով բանաստեղծն ծածկուած էր իւր իսկականն՝ Կ ու ն ի ա Ա. բ ու Մ ա ն ս ու լ ր:

(2) Mohl, Préface, p. XVII-XX.